

Էմիլյա ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

*ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական,  
ՀՌՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի  
քրեական իրավունքի և քրեական դատավարության  
իրավունքի ամբիոնի հայցորդ*

## ՆԱՆՑԱՎՈՐԻ ԱՆՉԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԵՏԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐԱՅԻ ՊԱՏԻԺ ԵՇԱՆԱԿԵԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ՊԱՏԱՆՉ

Հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու իրագործումն իրենից ենթադրում է վերջինի նկատմամբ պետության կողմից օրենքով սահմանված կարգով քրեաիրավական ներգործության միջոցների կիրառում: Որպես քրեաիրավական ներգործության միջոց և, հետևաբար, քրեական պատասխանատվության իրագործման ձև, հանդես է գալիս քրեական պատիժը, որի էությունն այն է, որ դրա միջոցով պետության անունից բացասական գնահատական է տրվում անձի արարքին:

Դատավճիռ կայացնելիս դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հաջողականությամբ լուծում է ամբաստանյալի պատժի հետ կապված հետևյալ հարցերը. արդյո՞ք նա ենթակա է պատժի իր կատարած հանցանքի համար և ի՞նչ պատիժ պետք է նշանակվի նրա նկատմամբ<sup>1</sup>:

Պատիժ նշանակելիս դատարանը պետք է զերծ մնա խտրականությունից՝ կապված դատապարտյալի ազգային, ռասայական, կրոնական պատկանելիության, ինչպես նաև նրա սոցիալ-տնտեսական կարգավիճակի հետ<sup>2</sup>: Այս առումով պետք է նշել, որ համանման հանգամանքների առկայության դեպքում ամբաստանյալների նկատմամբ պետք է նշանակվի համաչափ պատիժ, իսկ պատիժների միջև անհավասարությունը կարող է հանգեցնել ողջ դատական իշխանության նկատմամբ հասարակության

վստահության կորստի: Միաժամանակ, պատիժ նշանակելիս դատարանի կողմից պետք է հաշվի առնվեն կատարված հանցագործության ծանրությունը, և նշանակված պատիժը չպետք է ավելի խիստ լինի, քան դա անհրաժեշտ է պատժի սոցիալական նպատակներին հասնելու համար: Դատարանն անձի նկատմամբ պատիժ նշանակելիս պետք է օժտված լինի հայեցողության լայն շրջանակով, պետք է հաշվի առնի ոչ միայն կատարված հանցագործության ծանրությունն ու հանրային վտանգավորությունը, հանցանք կատարած անձի մեղքը, այլ նաև այն փաստերն ու հանգամանքները, որոնք մեղմացնում կամ ծանրացնում են հանցագործության և այն կատարած անձի հանրային վտանգավորությունը:

Այսպես՝ յուրաքանչյուր հանցագործություն կատարվում է կոնկրետ անձի կողմից, հետևաբար կատարված արարքի մեջ իրենց արտացոլումն են գտնում հանցավորի կամքը, հայացքները, սովորությունները և այլն:

ՀՀ գործող քրեական օրենսդրությունը հանցավորի անձը բնութագրող տվյալները դիտում է որպես քրեական պատասխանատվության և պատժի անհատականացման հիմք (ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մաս): Դատարանի կողմից որպես հանցավորի անձը բնութագրող հատկանիշներ գնահատվում են նրա սոցիալ-հոգեբանական, սոցիալ-ժողովրդագրական հատկությունները՝ վարքագիծն ընտանիքում և կենցաղում, աշ-

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2019 7 - 8 (241-242)

ՊԱՏԱԿԱՆ  
Իշխանություն



խատանքի հանդեպ ունեցած վերաբերմունքը, կրթությունը, առողջական վիճակը, տարիքը, ծառայությունը պետության ու հասարակության առջև և այլն: Այդ տվյալները դատարանին հնարավորություն են տալիս անձին դիտելու ոչ միայն որպես հանցանք կատարող, որը պետք է պատասխանատվություն կրի, այլ նաև որպես կոնկրետ անձ՝ իր անհատական հատկանիշներով հանդերձ: Բացի դրանից՝ պատիժ նշանակելիս հանցավորի նկատմամբ անհատական մոտեցումն անհրաժեշտ է, որպեսզի դատարանը պատժի տեսակը և չափն ընտրելիս համոզվի, որ դրանով կհասնի պատժի նպատակներին:

Միևնույն ժամանակ, հանցավորի նկատմամբ պատիժ նշանակելիս նրա անձը բնութագրող հատկանիշների հաշվառմանը վերաբերող հարցերն իրենց բացառիկ գործնական նշանակության ուժով՝ մշտապես արդիական են եղել քրեական իրավունքի տեսության մեջ: Ընդ որում, այս հարցում կան տարակարծություններ, որոնք հանգեցնում են երկու հիմնախնդիրների. 1) դատարանը հատկապես անձի ո՞ր առանձնահատկությունները պետք է հաշվի առնի պատիժ նշանակելիս, 2) ինչպիսի՞ մեխանիզմների միջոցով է հանցավորի առանձնահատկությունները բնութագրող հատկանիշներն ազդեցություն ունենալու նշանակվելիք պատժի վրա:

Առաջին հիմնախնդրի բարդությունը բացատրվում է նրանով, որ օրենքը որպես հաշվառման ենթակա չափանիշ մատնանշում է միայն մեղավորի անձը, սակայն յուրաքանչյուր անձ բնութագրվում է բազմաթիվ անհատական հատկանիշներով, որոնց թվում են անձնական որակական հատկանիշները, բնավորության առանձնահատկությունները, խառնվածքը և այլն:

Իրավաբանական գրականության մեջ արտահայտված են բազմաթիվ դիրքորոշումներ այն մասին, թե այդ հատկանիշներից որոնք են ենթակա հաշվառման:

Ըստ այդմ, անձը բնութագրող հատկանիշները կարելի է բաժանել երկու խմբի՝ հաշվի առնելով այդ հատկանիշների մեկնաբանման նեղ և լայն իմաստները: Առաջին դիրքորոշման կողմնակիցները կարծում են, որ պատիժ նշանակելիս անհրաժեշտ է հաշվի առնել միայն այն հանգամանքները, որոնք անմիջականորեն կապված են կատարված հանցագործության հետ<sup>3</sup>, երկրորդ դիրքորոշման կողմնակիցները, ընդհակառակը, գտնում են, որ մեղավորի անձը բնութագրող բոլոր հանգամանքները հաշվի առնելու անհրաժեշտությունը առավել հիմնավոր է<sup>4</sup>:

Հանցավորի անձը բնութագրող հատկանիշների տարածական հաշվառման կողմնակիցների թվին կարելի է դասել նաև այն գիտնականներին, որոնք իրենց հերթին այդ հատկանիշները բաժանում են մի քանի խմբերի: Օրինակ, Ա. Պ. Չուգակը և Ե. Գ. Վեսելյովը մեղավորի անձը բնութագրող հատկանիշները բաժանում են երեք խմբի.

1) անձական բնութագիրը (հանցավորի անչափահաս լինելը, հղիությունը, երեխաների առկայությունը, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամությունը, դատվածությունը, ռեցիդիվը և այլն),

2) ֆիզիոլոգիական հատկանիշները (սեռը, տարիքը, առողջական վիճակը, ֆիզիկական արատների և հոգեկան խանգարումների առկայությունը, որոնք չեն բացառում մեղսունակությունը, անձի այլ առանձնահատկությունները),

3) սոցիալական հատկանիշները (կրթությունը, ընտանեկան դրությունը, խնամքի տակ անչափահաս երեխաների կամ տարեց ծնողների առկայությունը, ամբաստանյալի եկամուտը, աշխատանքը, ընդհանուր կեցության կանոնների նկատմամբ վերաբերմունքը, բնակության և աշխատանքի վայրերում ունեցած բնութագիրը, պետական պարգևների առկայությունը և այլն)<sup>5</sup>:

Միևնույն ժամանակ, Ա. Վ. Իշչենկոն առանձնացնում է անձը բնութագրող հատկանիշների չորս խումբ.

1) ընդհանուր սոցիալական բնութագիրը (սոցիալական հասունության մակարդակը, կողմնորոշումների կայունությունը, հասարակության վերաբերյալ դիրքորոշումները, կրթությունը, վերաբերմունքը հանրային օգտակար աշխատանքին և այլն),

2) անձի հոգեֆիզիկական առանձնահատկությունները, որոնք բաժանվում են երկու բաղադրիչների՝ բարոյահոգեբանական բնութագիրը (բնավորության գծեր, սովորություններ, հետաքրքրություններ և այլն) և առողջական վիճակը (հոգեկան վիճակ, ֆիզիկական վիճակ և այլն),

3) տեղեկություններ դատարանական պայմանների մասին (ընտանիքից դուրս կամ ընտանիքում, լիարժեք կամ ոչ լիարժեք ընտանիքում, բարեկեցիկ կամ նյութապես ոչ ապահով պայմաններում, ինչպես նաև տեղեկություններ ուսման, աշխատանքի մասին և այլն),

4) տեղեկություններ հետհանցավոր վարքագծի բնույթի մասին<sup>6</sup>:

Բարձրագված հարցի կապակցությամբ Ա.Ս.Ժումաևը գրում է. «Քրեական իրավունքի տեսությունում և դատական պրակտիկայում ընդունված է համարել, որ պատիժը ծանրացնող հանգամանքների ցանկը սպառիչ է: Եթե ենթադրենք, որ պատիժ նշանակելիս անձը բնութագրող տվյալներին կարելի է դասել նաև մեղավորին բացասական բնութագրող ցանկացած հանգամանք, այդ թվում՝ հանցագործության հետ չկապված, ապա փաստացիորեն ծանրացնող հանգամանքների ցանկի սպառիչ լինելու մասին կանոնը չի գործի: Ամեն դեպքում, կատսցվի, որ բացասական հանգամանքը հաշվի է առնվել պատիժ նշանակելիս՝ որպես մեղավոր անձի մասին տվյալ: Այս իրավիճակն անընդունելի է»<sup>7</sup>: Հեղինակը կարծում է, որ ավելի ճիշտ է պատիժ նշանակելիս հաշվի առնել անձին դրական բնութագրող ցանկացած տվյալներ, իսկ բացասական բնույթի հանգամանքներից կարող են հաշվի առնվել միայն այնպիսիք,

որոնք անմիջականորեն կապված են կատարված հանցագործության հետ<sup>8</sup>:

Վերոնշյալ դիրքորոշման հետ դժվար է համաձայնել՝ դրանում առկա ներքին հակասության պատճառով: Իսկապես, պատիժը ծանրացնող հանգամանքների ցանկը սպառիչ է և ենթակա չէ տարածական մեկնաբանության: Սակայն, դա չի նշանակում, որ մեղավոր անձի մասին տվյալները, որոնք նրան բացասական կերպով են բնութագրում, չեն կարող և չպետք է անդրադառնան պատժի վրա՝ որպես անձը բնութագրող տվյալ: Պատիժը ծանրացնող հանգամանքների ցանկը սպառիչ լինելու մասին կանոնի ոչ մի խախտում այդ դեպքում տեղի չի ունենա: Բացի դրանից՝ պարզ չէ, թե ինչի վրա է հիմնված պատիժը նշանակելիս միայն անձը դրական բնութագրող հանգամանքների հաշվառման մասին դիրքորոշումը: Մեր կարծիքով, նման մոտեցմամբ դատական պրակտիկայում կարող է հանգեցնել պատիժ նշանակելիս արդարության սկզբունքի խախտման, քանի որ այդ դեպքում պատիժը կհամապատասխանի մեղավորի անձին ոչ թե ամբողջապես, այլ բացառապես նրա դրական հատկանիշների հաշվառմամբ: Այսպիսով, պատիժ նշանակելիս մեղավորի անձը բնութագրող տվյալների գնահատումը թելադրում է այն տվյալների հավասարապես հաշվառման անհրաժեշտությունը, որոնք անձին բնութագրում են ինչպես դրական, այնպես էլ բացասական:

Ինչ վերաբերում է մեղավորի անձը հաշվի առնելուն նեղ իմաստով, ապա այդ մեկնաբանության գլխավոր թերությունը պատժի անհատականացման, հետևաբար՝ դրա արդարության գաղափարի անխուսափելի ոտնահարումն է, քանի որ անձը բնութագրող տվյալների (կատարված հանցագործության հետ անմիջականորեն չկապված) անտեսումն ինքնին կարելի է գնահատել որպես ոչ արդարացի մոտեցման դրսևորում: Բացի դրանից՝ մեղավորի անձը բնութագրող հանգամանքները դատարանի համար



յուրատեսակ ուղենիշ են, որը թույլ է տալիս նշանակել այնպիսի պատժամիջոց, որը կարող է հասնել նրա առջև օրենքով դրված նպատակներին, առաջին հերթին՝ դատապարտյալի ուղղմանը:

Նախապատվությունը տալով մեղավորի անձի հաշվառման լայն իմաստով տարածական մեկնաբանությանը, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մեկ այլ, ոչ պակաս կարևոր հանգամանքի վրա: Թվարկելով մեղավորին բնութագրող հանգամանքները, որոնց պետք է ուշադրություն դարձվի պատիժ նշանակելիս, գիտնականները հաճախ շրջանցում են դրանց հաշվառման մեխանիզմի հարցը, ինչն անթույլատրելի է, քանի որ նման հանգամանքների ցանկի անսահման «ուռճացումն» անիմաստ է՝ առանց դատարանի կողմից դրանց հաշվառման գործնական հնարավորության առկայությունը դիտարկելու:

Հետևաբար, անձը բնութագրող էական հանգամանքների ցանկի չափից ավելի ընդլայնումը միշտ չէ, որ հիմնավորված է: Ձևավորելով այս ցանկը՝ անհրաժեշտ է առաջին հերթին հաշվի առնել դրանում այս կամ այն տարրն ընդգրկելու նպատակահարմարությունը, առաջին հերթին, պատժի վրա ազդեցություն ունենալու հնարավորության, և երկրորդ՝ դատարանի կողմից դրանց փաստացի գնահատական տալու հնարավորության առկայության տեսանկյունից:

Քննարկվող հարցի վերաբերյալ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներով ձևավորված իրավական դիրքորոշումներին: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանցավորի անձը, նրա՝ սոցիալապես էական նշանակություն ունեցող հատկանիշները բացահայտվում են վերջինիս վարքի, հասարակության մեջ նրա իրականացրած գործունեության միջոցով: Հետևաբար, պատասխանատվության անհատականացման համար անհրաժեշտ է իմանալ ոչ միայն

այն պայմանները, որոնցում ձևավորվել է հանցավորի անձը, այլև նրա սոցիալ-ժողովրդագրական, բարոյահոգեբանական և քրեաիրավական բնութագրերը, որոնք իրենց արտացոլումն են գտել արարքի, մասնավորապես հանցագործության կատարման մեջ:

ՀՀ Վճռաբեկ դատարանն իր կայուն նախադեպային իրավունքի շրջանակում մշտապես կարևորել է պատասխանատվության անհատականացման համար հանցավորի անձը բնութագրող տվյալները, մասնավորապես նրա կենսաբանական և սոցիալական առանձնահատկությունները բացահայտելու և օբյեկտիվորեն հաշվի առնելու՝ դատարանի պարտականությունը: Այսպես՝ Ն. Սարգսյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն ընդգծել է. «(...) Հանցանք կատարած անձի ուսումնասիրությունը մեծ դեր է խաղում պատիժ նշանակելու համար: ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի («Պատժի նպատակները») իմաստով պատժի նպատակը, սոցիալական արդարությունը վերականգնելուց բացի, դատապարտյալի ուղղումն է և նոր հանցագործությունների կանխումը, ուստի դատարանը պարտավոր է հանգամանորեն հետազոտել անձի ինչպես կենսաբանական, այնպես էլ սոցիալական առանձնահատկությունները: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ շատ դեպքերում պատժի տեսակի և չափի վրա ազդում են հանցավորի սեռը, տարիքը, առողջական վիճակը»<sup>9</sup>:

Ինչպես երևում է մեջբերված իրավական դիրքորոշումից՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը հանցանք կատարած անձի ուսումնասիրությունը կարևորում է պատժի նպատակների իրագործմանը հասնելու առումով, քանի որ առանց դրա հնարավոր չէ ապահովել դատապարտյալի ուղղումն ու նոր հանցագործությունների կանխումը:

Նշված որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխու-

թյուններով) 3-րդ և 14-րդ հոդվածների պահանջները, զարգացրել է վերոնշյալ իրավական դիրքորոշումը, փաստում է, որ, պատժի անհատականացման ժամանակ հանցավորի անձը բնութագրող տվյալները հաշվի առնելու անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես պատժի նպատակների իրականացման, այնպես էլ անձի արժանապատվության հարգման սահմանադրական պահանջով: Հանցավորի անձը բնութագրող տվյալները չեն կարող սահմանափակվել միայն անձի բարոյական հատկանիշներով և ներառում են նաև անձի ընտանեկան դրությունը, զբաղմունքի տեսակը, կրթությունը, նրա դրական կամ բացասական բնութագիրը, խրախուսանքների կամ տույժերի առկայությունը և այլն: Անձը բնութագրող տվյալների նշված մեկնաբանությունը վերաբերում է հատկապես հանցանք կատարած զինծառայողների անձնավորությանը, ինչը պայմանավորված է զինվորական ծառայության՝ որպես պետական ծառայության առանձնահատուկ տեսակով և այդ ծառայությունը կրող զինծառայողների հատուկ կարգավիճակով:

Հետագայում՝ Վճռաբեկ դատարանը *Է. Ալիսրիսյանի* գործով 2018 թվականի դեկտեմբերի 24-ին կայացված որոշմամբ ևս ընդգծել է դատարանների կողմից հանցավորի անձը բնութագրող տվյալները մանրակրկիտ վերլուծելու և պատիժ նշանակելիս դրանք հաշվի առնելու անհրաժեշտությունը<sup>10</sup>: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը մշտապես կարևորել է հանցանք կատարած անձի կյանքի ու անձնական առանձնահատկությունները վեր հանելու (ընտանեկան դրություն, տարիք, առողջական վիճակ և այլն), ինչպես նաև նախկինում դրսևորած վարքագիծը բազմակողմանի գնահատման ենթարկելու կարևորությունը, որոնք կարող են վերջինիս բնութագրել ինչպես դրական, այնպես էլ բացասական առումներով: Որպես օրինակ նշենք՝ *Ս. Աղախանյանի* գործով կայացված որոշումը, որով Վճռաբեկ դա-

տարանը, անդրադառնալով ամբաստանյալի կյանքի առանձնահատուկ պայմաններին, մասնավորապես, հաշվի առնելով այն, որ ամբաստանյալի խնամքին են գտնվում երեք անչափահաս երեխաները, վատառողջ կինը, արձանագրել է, որ նրա նկատմամբ նշանակված պատիժը կարող է բացասական ազդեցություն ունենալ նրանց հետագա կյանքի պայմանների վրա<sup>11</sup>:

Ինչ վերաբերում է հանցավորի՝ նախկինում դրսևորած վարքագիծը գնահատելու անհրաժեշտությանը, սպա դատվածության առկայությունը, բնականաբար, անձին բնութագրում է բացասական կերպով, վկայում վերջինիս վտանգավորության բարձր աստիճանի մասին, ցույց է տալիս, որ նախկին դատապարտումը և կիրառված ներգործության միջոցները որևէ ազդեցություն չեն ունեցել վերջինիս ուղղման և նոր արարքների կանխման վրա: Վերոնշյալը հիմք է կատարվող հաշորդ հանցանքի համար անձի նկատմամբ կիրառելու ավելի խիստ քրեախրավական ներգործության միջոցներ: Մասնավորապես, դատվածությունը որպես կանոն հիմք է անձի արարքում հանցագործությունների ռեցիդիվը գնահատելու համար, հետևաբար, պատիժ նշանակելիս դատարանը, պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներից բացի՝ ղեկավարվում է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 67.1-րդ հոդվածով նախատեսված՝ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոններով, որոնք անձի համար առաջացնում են բացասական քրեախրավական հետևանքներ: Նախկինում կատարված հանցանքի համար անձը չի կարող ամբողջ կյանքում համարվել բարձր վտանգավորություն ունեցող: Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքը նախատեսում է դատվածության իրավական հետևանքների վերացման երկու ինքնուրույն մեխանիզմ՝ դատվածության մարում և դատվածության համում: Դատվածության մարումը կամ համումը վերացնում է դրա հետ կապված



ցանկացած իրավական հետևանք, և անձն օրենքի տեսանկյունից համարվում է հանցանք չկատարած: Այսպիսով, մարված կամ հանված դատվածությունը որևէ իրավական հետևանքներ չունի, չի կարող պատիժ նշանակելիս հաշվի առնվել, այդ թվում նաև՝ որպես հանցավորի անձը բնութագրող հանգամանք:

Այս հարցի կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում *Ա Շաքարյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ին կայացված որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. «Մարված կամ հանված դատվածության պայմաններում անձի կողմից նախկինում հանցանք կատարած լինելը որպես նրա անձը բացասաբար բնութագրող հանգամանք հաշվի առնելն անթույլատրելի է: Նախկինում հանցանք կատարած լինելը դիտելով որպես հանցավորի բարոյաև հոգեբանական և քրեաիրավական բնութագիր՝ դատարանը պարտավոր է այն ուղղակիորեն արտացոլել պատժի և պատասխանատվության անհատականացման ժամանակ: Մինչդեռ, մարված կամ հանված դատվածության պայմաններում անձը քրեական օրենքի իմաստով համարվում է հանցագործություն չկատարած, և նրա նախկին դատվածությունը քրեաիրավական հետևանք առաջացնել չի կարող, այդ թվում՝ չի կարող անդրադառնալ նոր հանցագործության համար նշանակվելիք պատժի վրա: Ուստի, մարված կամ հանված դատվածության պայմաններում նախկինում հանցանք կատարած լինելը դիտելով որպես հանցավորի անձնագործությունը բացասաբար բնութագրող հանգամանք՝ դատարանը ոչ միայն կի-

մաստագրկի դատվածությունը հանելու, մարելու քրեաիրավական կառուցակարգերը, այլև կարող է խախտել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները»: Վերը նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանը ոչ իրավաչափ է համարել մարված դատվածության պայմաններում նախկինում հանցանք կատարած լինելը որպես հանցավորի անձնագործությունը բացասական բնութագրող հանգամանք դիտելը<sup>12</sup>:

Վերը շարադրված վերլուծությունը հիմք է տալիս փաստելու, որ կատարված հանցագործությունը բնութագրելու և դրա էությունը բացահայտելու, ինչպես նաև արդարացի պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է բազմակողմանի վերլուծության ենթարկել հանցավորի անձը բնութագրող տվյալները և ճիշտ գնահատական տալ դրանց:

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ հանցավորի պատասխանատվությունն ու պատիժն անհատականացնելիս դատարանը պետք է հանգամանորեն ուսումնասիրի հանցավորի ընտանեկան դրության, նրա խնամքին այլ անձանց առկայության, սոցիալական միջավայրում նրա զբաղեցրած տեղի ու դիրքի, սոցիալական միջավայրում նրա ունեցած բնութագրի և մի շարք այլ հանգամանքների վերաբերյալ փաստական տվյալները: Անձի նկատմամբ պատիժ նշանակելիս և այն փաստացի կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն հանգամանքը, թե նշանակված պատիժն ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ ամբաստանյալի ընտանիքի կյանքի պայմանների վրա:

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2019 7 - 8 (241-242)

<sup>1</sup> Այս հարցի կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 348-րդ և 351-րդ հոդվածներով սահմանվում են դատավճռի կայացման երկու փուլ: Առաջին փուլում դատարանը որոշում է կայացնում հանցագործության կատարման և դրանում ամբաստանյալի մեղավորության վերաբերյալ, և ըստ այդմ դատարանի կողմից կայացվում է մեղադրական կամ արդարացման վերոյիկտ, որից հետո երկշաբաթյա ժամկետում նշանակվում է լրացուցիչ դատալսումներով առաջին դատական նիստը: Այդ նիստում արդեն քննարկման առարկա են դառնում դատապարտված մեղադրյալի պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող, ինչպես նաև նրա անձը բնութագրող հանգամանքների վերաբերյալ ապացույցները (մեղադրական վերոյիկտի դեպքում): Լրացուցիչ դատալսումներով դատական նիստի արդյունքում դատարանը կայացնում է դատավճիռ, որով և լուծվում են պատժի հետ կապված հարցերը: Նոր քրեադատավարական օրենսգրքի նման կարգավորումը հնարավորություն է տալիս առանձին քննարկման առարկա դարձնել կատարված հանցագործության մեջ ամբաստանյալի մեղքի հիմնավորվածության և պատժի նշանակման հարցերը՝ դրանով իսկ բարձրացնելով պատժի տեսակին և չափին վերաբերող հարցերի կարևորությունը: Տես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ, էլեկտրոնային ռեսուրս՝ <http://moj.am/legal/view/article/418> (վերջին մուտք՝ 22.08.2019 թվական):

<sup>2</sup> Տես International handbook of International Standards on Sentencing Procedure, by the American Bar Association, Washington, D.C., 2010, էջ 3:

<sup>3</sup> Տես Арямов А.А., Общетеоретические основы учения об уголовном наказании, Дисс. ... д.ю.н. СПб., 2004, էջ 175: Мельникова Ю.Б., Личность преступника и индивиду-

ализация уголовного наказания, «Советское государство и право», 1972, № 8, էջ 108: Чечель Г.И., Личность преступника как фактор, влияющий на назначение наказания, СПС «КонсультантПлюс», 2012, № 5:

<sup>4</sup> Տես Кругликов Л.Л., Уголовно-правовые средства обеспечения справедливости наказания. Ярославль, 1986, էջ 53: Лейкина Н.С., Личность преступника и уголовная ответственность, Л., Издательство ЛГУ, 1968, էջ 113: Непомнящая Т.В., Мера уголовного наказания: проблемы теории и практики, Дисс. ... д.ю.н. Екатеринбург, 2010, էջեր 225-226:

<sup>5</sup> Տես Чугаев А.П., Веселов Е.Г., Назначение наказания: научно-практическое пособие, М., Юрлитинформ, 2008, էջեր 72-73:

<sup>6</sup> Տես Ищенко А.В., Назначение наказания по Уголовному кодексу Российской Федерации, М., Юрлитинформ, 2002, էջեր 13-14:

<sup>7</sup> Տես Жумаев А.С., Специальные правила назначения наказания за единичное преступление, Дисс. ... к.ю.н., М., 2009, էջեր 54-55:

<sup>8</sup> Տես նույն տեղում, էջ 54:

<sup>9</sup> Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Նարեկ Սարգսյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԳ/0042/01/11 որոշումը:

<sup>10</sup> Տես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Աբրահամ Միրայելյանի* գործով 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԵԿԳ/0079/01/16 և *Խաչատրյանի Քեզարյանի* գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ԵԿԳ/0010/01/17 որոշումները:

<sup>11</sup> Տես ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Սեյրան Աղախանյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԱՎԳ/0082/01/12 որոշումը:

<sup>12</sup> Տես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Վազգեն Քոչարյանի* գործով 2014 թվականի օգոստոսի 15-ին կայացված թիվ ԱՎԳ/0044/01/13 և *Սարգիս Գալստյանի* գործով 2015 թվականի մարտի 27-ին կայացված թիվ ԿԳ-1/0078/01/13 որոշումները:

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2019 7 - 8 (241-242)



## RESUME - РЕЗЮМЕ

### CONSIDERATION OF THE PERSONALITY OF THE GUILTY AS ONE OF THE PRINCIPAL CRITERIA FOR THE APPOINTMENT OF FAIR PUNISHMENT

**Emilya Abrahamyan**

*Assistant to the Chairman of the Criminal Chamber of the RA Cassation Court, PhD Student at the Chair of Criminal Law and Criminal Procedure Law of RAU Institute of Law and Politics*

The article is devoted to the scientific analysis of one of the fundamental criteria for the appointment of a fair punishment - the personality of the guilty. The author considers which characteristics of the personality of the guilty must be considered when sentencing. A generalized notion of personality as a person, a carrier of social and moral-psychological characteristics with his individual qualities, abilities and social functions realized by him is derived. Individualization, along with differentiation, gives punishment a certain social meaning. Together with the differentiation of punishment, its individualization constitutes the main content of the principle of justice of criminal responsibility.

The article focuses on the problems of interpretation and consideration of the personality of the guilty, based on the opinions expressed by scientists, and the use of the results of the study of judicial practice. Attention is paid to the errors, which arise in connection with applying the circumstances being examined, and which lead to a violation of the principle of justice.

**Keywords:** *purpose of punishment, principle of justice, personality of the guilty, criteria of individualization of punishment.*

### УЧЁТ ЛИЧНОСТИ ВИНОВНОГО КАК ОДИН ИЗ ПРИНЦИПИАЛЬНЫХ КРИТЕРИЕВ НАЗНАЧЕНИЯ СПРАВЕДЛИВОГО НАКАЗАНИЯ

**Эмиля Абрамян**

*Помощник Председателя Уголовной палаты Кассационного суда РА, соискатель кафедры уголовного права и уголовно-процессуального права Института права и политики РАУ*

В данной статье проводится научный анализ одного из основополагающих критериев назначения справедливого наказания – личности виновного, рассматривается, какие характеристики личности преступника необходимо учитывать при назначении наказания. Выводится обобщенное понятие личности как человека, носителя социальных и морально-психологических свойств с его индивидуальными качествами, способностями и реализуемыми им социальными функциями. Индивидуализация вместе с дифференциацией наказания придает ему определенный социальный смысл и составляет основное содержание принципа справедливости уголовной ответственности.

Основное внимание акцентируется на проблемах определения понятия личности виновного и ее учета с опорой на мнения ученых, а также использование результатов исследований судебной практики. Изучаются ошибки, возникающие в связи с применением исследуемых обстоятельств и влекущие нарушение принципа справедливости.



*Ключевые слова:* назначение наказания, принцип справедливости, личность виновного, критерии индивидуализации наказания.

**Բանալի բառեր** - պարծի նշանակում, արդարության սկզբունք, հանցավորի անչը բնութագրող տվյալներ, պարծի անհարականացման չափանիշներ:

**Է. Աբրահամյան** - ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական, ՀՌ-Հ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ, էլ. փոստ՝ emilyaabrahamyan@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն՝ 23.08.2019, տրվել է գրախոսության՝ 23.08.2019, երաշխավորվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լ. Թադևոսյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 26.09.2019